Ասիկա քարիւղով հարուստ Օմանն է՝ Հինգ-շարին առուստ մը, երբ իսլամական շարաֆավերը նոր սկսած է Ալ Մինթիրիպ գիւղաքաղաքը:

...ՍԱԿԱԻԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԼՈՒԾԸ

Քաղաքական գետնի վրայ Օմանը կը քալէ աւանդական ցեղայնական ժողովրդավարութեան (կեդրոնացած՝ բացարձակ մենատէրի մը շուրջ) եւ որոշում տալու մէջ աւելի գործող մասնակցութիւն մը պահանջող ժամանակակից ճնշումներու ուղիներով: Սուլթան Քալուսի ղեկավարութեան տակ Օմանը կը կառավարուի գործատեր - քաղաքական գործիչներէ բաղկացած սակաւապետութեամբ մը:

Երկիրը աւելի ժողովրդավար վարչաձեւի մօտեցնելու նպատակով Սուլթան Քալուս 1991ին ստեղծեց Մանկիս Ալ Շուրան՝ տեսակ մը խորհրդարան, որ իրաւունք ունի առաջարկներ ներկայացնելու, բայց ոչ՝ նոր օրէնքներ հրապարակելու: Աւելի Գ. Գահիկա իրաւունք ունի որոշ նախարարութիւններէ բացառութեամբ պահանջելու: Նախարարներուն հարցապնդումը տեղւոյն վրայ կը պատկերասփռուի, ինչ որ օմանցիները կը գամէ պատկերասփռուի դիմաց լսելու ջուրի, հեռաձայնի, առողջապահութեան եւ կրթութեան մասին հարցերու արժանաւորութիւնը: Հարցապնդումէ գերծ կը մնան տնտեսութեան, պաշտպանութեան, քարիւղի եւ արտաքին քաղաքականութեան նախարարութիւնները, որոնք «ամենէն կարեւորն են», ինչպէս կ'ըսէ ժողովուրդը:

Ուժի բաժնեկցումը դանդաղ կ'ընթանայ ունան համար: 1994ին Օմանի կառավարութիւնը բացայայտեց զինուորական դաւը, որ կը ծրագրէր արմատապէս շրջել Օմանի վարչաձեւը: Հարիւրաւոր օմանցիներ բանտարկուեցան եւ Օմանի ներքին ապահովութեան համակարգին քայքայուեցան ցեղերը: Սուլթանին հաւատարմ սակայն իշխող սակաւապետութեան փոխծութեան դէմ լարուած բազմաթիւ օմանցիներ կը հաւատան, որ քաղաքական յեղաշրջում մը անհրաժեշտ է: Անոնք կառավարութեան մէջ իշխող տարրերը կ'ամբաստանեն իբրեւ դրամաշուրջներ, որոնք կը ղեկավարեն երկրի ամենէն մեծ ընկերութիւնները եւ եկամուտը կը հոսեցնեն իրենց եւ քարեկամներու գրպանը: Մայրաքաղաք Մասքաթի տարածքին բազմաթիւ սեփական փառաշուք պալատներով կ'ապացուցեն կառավարութեան վերնախաւի փառածութիւնը:

Օմանցիներուն մեծամասնութիւնը երկրին մէջ տիրող կաշառակերութիւնն ու փառածութիւնը չի վերագրեր Սուլթան Քալուսի, գոր կը համարէ «իսկական բարեկարգիչ մը», որ սակայն «տնտեսական սահմանափակ գիտելիքներ ունի եւ շրջապատուած է այնպիսի մարդոցով, որոնք կ'օգտագործեն անոր սահմանափակ գիտելիքները եւ սխալ պատկերով մը կը ներկայացնեն զայն՝ թոյլ չտալով, որ ռեւէ մէկը մօտեցնայ անոր», կ'ըսեն շատերը:

Աւելի Գ. Օմանի մէջ հաստատուած խիստ գրաքննութիւնը կը կաշկանդէ ազատ խօսքի արտայայտութիւնը՝ նոյնիսկ բանտարկելով խախտող լրագրողները, թէեւ տեղեկատվական Գախարարութիւնը ամեն ազատութիւն կը շնորհէ օտար թղթակիցներու:



Օմանը ղէպի արդիականութիւնն առաջնորդած սուլթանը՝ Քալուս Պըն Սայիտ Ալ Սայիտ:

տարիներուն երկրին ունէր միայն 10 քմ. երկաթումքամը սալարկուած փողոցներ, աշխարհիկ 3 վարժարաններ եւ 2 հիւանդանոցներ, որոնք յաճախ երկետրականութենէ զուրկ էին: Անգործանաչութիւնը եւ նորածններու մահացութիւնը սովորական երեւոյթներ էին: Սուլթան Սայիտ նաեւ արգիլած է ճամբորդութիւնն ու այլ երկիրներու հետ վաճառականութիւնը, նոյնիսկ՝ հեծիկի եւ արեւուանկնոց գործածութիւնը: Բագմաթի քաղաքացիներ խոյս կու տային զէպի այլ երկիրներ՝ գործ ձարելու համար:

Արքայական պալատին մէջ 6 տարի տնային կայանքի ենթարկուելէ ետք, սուլթանին պաւակը՝ Քապուս 1970ին բրիտանական գինուորական աջակցութեամբ մը գահնիկէն զրուս զինք եւ դարձաւ Օմանի նոր իշխանաւորը: Ան երկու տասնամեակի ընթացքին յաջողեցաւ երկրի վերադարձնել զաղթածները եւ Օմանը վերածնել երրորդ Աշխարհի բարգաւաճումի օրինակի մը, որ եզակի է ոչ միայն չըրանին, այլեւ ամբողջ աշխարհի մէջ: Սուլթան Քապուս երկրին բոլոր չըրաններուն մէջ զարմանալու էր եւ հիւանդանոցներ հաստատեց, աշխարհի մէջ պատուաստումի ամենին բարձր համեմատութիւններէն մէկը իրագործեց եւ մշակեց կրթական համակարգ մը, որ այսօր ունի 478 հազար աշակերտ (վերջին 24 տարիներուն Օմանի բնիկ բնակչութեան թիւը եռապատկուած է զխաւորարար այս իրագործումներուն շնորհիւ):

Սուլթան Քապուս պըն Սայիտ Ալ Սայիտի կառավարութիւնը աւելի քան 5800 քմ. երկարութեամբ սալարկուած ճամբաներու ցանց մը տարածեց երկրին վրայ եւ հաստատեց հեռաձայններու խիտ ցանց մը՝ ցեղայնութիւնով բաժանուած բնակչութիւնը մը վերածելով միացեալ եւ ամբողջութեամբ պետութեան մը:

Պատմութեան մէջ որեւէ երկիր այսքան արագ

ՕՄԱՆԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԷՆ ԵՏՔ...

ՔԱՐԻԳՈՎ ՀԱՐՈՒՍԵ ԵՒ ՆՈՐ ՄԵՐԳԻԱԿԱՆԱՅԱԾ ՕՄԱՆԸ ԿԸ ՊԱՇՏՊԱՆԵ ԻՐ ԱՄԱՆԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՄԻՋԱԺՄԱՆԱԿ ՈՐՈՇԵԼՈՎ ՏԵՏԵՍՈՒԹԵԱՆ ՏԱՐԱԵՐ ՄԱՐՁԵՐ

Քին մէջ, որուն բնակիչները իրենց դիմաց տարածուող Ուհայայի աւազարի բնակներուն վրայ կը գրօսնուն ուղտերու մրցումի դարաւոր աւանդութեան օրէնքներով, մինչեւ որ ամէն ոք թաթխուի աւազի եւ քրտինքի մէջ:

Այս բոլորը ունին իրենց վարձատրութիւնը: մրցումին աւարտին հարուստ օմանցի մը կը բռնայ իր կաշիէ պալուսակը եւ օմանական ռիալի տրցակները կը բաժնէ յաղթական ուղտապաններուն, թէեւ բախտախաղը ինքնին արգիւտած է երկրին մէջ: Ցաղթական ուղտապան մը մինչեւ 2500 տոյար կրնայ ստանալ իր անասունին «վարպետութեան» համար: Սակայն աւելի կարեւորը այն է, թէ յաղթող ուղտի մը գինը արագ մազցում կ'արձանագործէ՝ արագավազ ուղտ մը կրնայ արժէ մինչեւ 150 հազար տոյար...:

ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԵՏՈՐՈՒ ՄԻՋԵՒ

Նոր դիգուած հարստութիւնն ու անգիւղող աւանդութիւնը կը միաձուլուին, մինչ վերջերս հարստացած Օմանը կ'ուղղուի զէպի շուրջ դար, առանց վստահ գիտնալու, թէ ուրիշ՝ պիտի ճար իր յաջորդ հարիւր միլիառ տոյարի եկամուտը:

Իրօք, Արաբական թերակղզիին արեւելեան ծայրամասը ընդ գրկող Օմանը բարեկեցիկ կեանք ապրելու քանի մը տարի եւս ունի, մինչեւ որ անոր հարստութեան աղբիւրը ցամաքի: Ներկայ նախատեսութիւններուն համաձայն, անոր քարիւղի ֆորներ 17 տարիէն ցամաքէ պիտի ըլլան: Մինչ այդ «սեւ սկիւն», որ Օմանը միջնադարեան կեանքէ մը դուրս բերած է վերջին քառորդ դարուն, տակաւին 75 միլիառ տոյար եւս կրնայ ապահովել երկրին:

Միայն 2 միլիոն բնակչութեամբ երկրի մը մէջ այս եկամուտը կրնայ մտածել տալ շարաֆավերներուն կայացող անհամար ուղտի մրցումներուն մասին: Սակայն նկատի ունենալով, որ քարիւղի երկամուտը ոտքի կը պահէ երկիրը՝ աշխատեցնելով կառավարական «մեքենան», քաղաքային տնտեսութիւնը եւ բնակչային բարօրութեան մակարդակը, ապա Օմանը արդէն իսկ կը զգայ «կամիթ»:

Ներկայիս օմանցիք կը փորձեն պատրաստուիլ յաջորդ հանգրուանին:

Անշուշտ անոնք պիտի կարենան գոյատեւել իրենց նուագած եկամուտներով, սակայն անոնց կեանքին պերճանքը նոյն մակարդակին վրայ պիտի չմնայ:

Եւ իսկապէս՝ պերճանք: Քարիւղով հարուստ բոլոր երկիրներուն նման, Օմանը շատ չուտ գրկեց հարստանալու գաղափարը: Արաբական թերակղզիին միւս երկիրներուն ընդմիջումով Օմանը բնակչան ուշ մտաւ քարիւղի խաղին մէջ: Անկեղ քարիւղ սկսաւ արտադրել 1967ին: Մինչեւ 1970 երկիրը մեկուսացած եւ յետմանց վիճակի մէջ մնաց ներկայ թագաւորին հօր՝ Սուլթան Սայիտ Պըն թայմուրի կողմէ, որ ղէմ էր արեւմտեան կեանքի որեւէ երեւոյթի: Անոր իշխանութեան տարիներուն երկրին ունէր միայն 10 քմ. երկաթումքամը սալարկուած փողոցներ, աշխարհիկ 3 վարժարաններ եւ 2 հիւանդանոցներ, որոնք յաճախ երկետրականութենէ զուրկ էին: Անգործանաչութիւնը եւ նորածններու մահացութիւնը սովորական երեւոյթներ էին: Սուլթան Սայիտ նաեւ արգիլած է ճամբորդութիւնն ու այլ երկիրներու հետ վաճառականութիւնը, նոյնիսկ՝ հեծիկի եւ արեւուանկնոց գործածութիւնը: Բագմաթի քաղաքացիներ խոյս կու տային զէպի այլ երկիրներ՝ գործ ձարելու համար:

Արքայական պալատին մէջ 6 տարի տնային կայանքի ենթարկուելէ ետք, սուլթանին պաւակը՝ Քապուս 1970ին բրիտանական գինուորական աջակցութեամբ մը գահնիկէն զրուս զինք եւ դարձաւ Օմանի նոր իշխանաւորը: Ան երկու տասնամեակի ընթացքին յաջողեցաւ երկրի վերադարձնել զաղթածները եւ Օմանը վերածնել երրորդ Աշխարհի բարգաւաճումի օրինակի մը, որ եզակի է ոչ միայն չըրանին, այլեւ ամբողջ աշխարհի մէջ: Սուլթան Քապուս երկրին բոլոր չըրաններուն մէջ զարմանալու էր եւ հիւանդանոցներ հաստատեց, աշխարհի մէջ պատուաստումի ամենին բարձր համեմատութիւններէն մէկը իրագործեց եւ մշակեց կրթական համակարգ մը, որ այսօր ունի 478 հազար աշակերտ (վերջին 24 տարիներուն Օմանի բնիկ բնակչութեան թիւը եռապատկուած է զխաւորարար այս իրագործումներուն շնորհիւ):

Արքայական պալատին մէջ 6 տարի տնային կայանքի ենթարկուելէ ետք, սուլթանին պաւակը՝ Քապուս 1970ին բրիտանական գինուորական աջակցութեամբ մը գահնիկէն զրուս զինք եւ դարձաւ Օմանի նոր իշխանաւորը: Ան երկու տասնամեակի ընթացքին յաջողեցաւ երկրի վերադարձնել զաղթածները եւ Օմանը վերածնել երրորդ Աշխարհի բարգաւաճումի օրինակի մը, որ եզակի է ոչ միայն չըրանին, այլեւ ամբողջ աշխարհի մէջ: Սուլթան Քապուս երկրին բոլոր չըրաններուն մէջ զարմանալու էր եւ հիւանդանոցներ հաստատեց, աշխարհի մէջ պատուաստումի ամենին բարձր համեմատութիւններէն մէկը իրագործեց եւ մշակեց կրթական համակարգ մը, որ այսօր ունի 478 հազար աշակերտ (վերջին 24 տարիներուն Օմանի բնիկ բնակչութեան թիւը եռապատկուած է զխաւորարար այս իրագործումներուն շնորհիւ):

Սուլթան Քապուս պըն Սայիտ Ալ Սայիտի կառավարութիւնը աւելի քան 5800 քմ. երկարութեամբ սալարկուած ճամբաներու ցանց մը տարածեց երկրին վրայ եւ հաստատեց հեռաձայններու խիտ ցանց մը՝ ցեղայնութիւնով բաժանուած բնակչութիւնը մը վերածելով միացեալ եւ ամբողջութեամբ պետութեան մը:

Պատմութեան մէջ որեւէ երկիր այսքան արագ

եւ այսքան կանոնաւոր ձեւով չէ բարգաւաճած: Նման փոփոխութիւն մը սովորաբար 2 դար կը տեւէ:

ՊԱՏՆԵԸ ՄԸ ՊԱՐՄԱՅ ԾՈՅՐՆ ՎՐԱՅ

Չմեռ Օմանի գով եղանակն է, երբ ջերմաստիճանը 38ի շուրջ կը տարուբերի մայրաքաղաք Մասքաթի մէջ, որ կը թուի Լոս Անձեթի մանրակերտը ըլլալ: ամէն կողմ սպիտակ ներկուած բնակարաններ, ճամբաներուն եզրին ցանուած արմաւենիներ, կանաչ հրապարակներ...: Քաղաքը կ'եռայ վերջին նորոյթ ինքնաշարժներու սուրճով եւ ձեռքէ ձեռք անցնող դրամի շրջումով:

Այսուհանդերձ արդիականութեան այս մթնոլորտին մէջ օմանցիք յաջողած են պահպանել իրենց կապը դարաւոր մշակոյթի մը հետ: Ժամանակին Օմանը ծովերու վրայ իշխող առեւտրական ուժ էր, գաղութատէր կայսրութիւն մը՝ Արեւելեան Ափրիկէի ծովափին երկայնքին: Այսօր անոր պարսպաման ճարտարապետութիւնը կ'արտացոլէ երկրին պատերազմներով կերտուած պատմութիւնը: Օմանը դարեր շարունակ ռազմագիտական պատէշ մըն էր Պարսից ծոցի մուտքին: Մովսէսեան չըրաններուն վրայ իշխող սուլթաններ անընդհատ կուլ մղած են ցամաքին աւելի խորերը իշխող իմամներու դէմ: Իսկ 1507ին 1650ի միջեւ երկրին ծովեզերեայ տարածքին տիրապետած են փորթուգալիս արկածախնդիրներ, որոնց կառուցած 400 տարուան ամրոցները՝ Միւրանին եւ Ճալային տակաւին իրենց հովանիին տակ կը պահէն Մասքաթի արքայական պալատը:

Արդի ժամանակներուն Օմանը դարձած է անպատճառ կերպով Բրիտանիոյ հովանաւորութեան տակ գտնուող երկիր մը: Բրիտանիոյ ներկայացուցիչը կ'ապրէր Օմանի արքայական պալատին կից, աւանդական կառույցի մը մէջ: 1970ական տարիներուն Օմանի բանակը կը ղեկավարուէր բրիտանացի գինուորականներու կողմէ, մինչ բրիտանացի քաղաքային պաշտօնները բարձր պաշտօններ կը վարէին Օմանի կառավարութեան մէջ:

Սակայն 1980ին ետք աւելի զգալի է Միացեալ Նահանգներու ազդեցութիւնը, որ հետզհետէ կը ցորանայ: Ամերիկեան օդուժը կ'օգտագործէ թա-

մարիթի եւ Մասիւրա կղզիին խարխիւները, ուր գինամթերք լեցուցած է հարկ եղած պարագային գործածելու համար: Մոցի պատերազմի շրջանին Օմանը առաջին հանգրուան էր Միացեալ Նահանգներու եւ բրիտանական ուժերուն համար: Օմանական ցամաքային ուժեր ուղարկուած էին Սէւտական Արաբիա՝ պաշտպանելու համար անոր սահմանը իրաքի հետ:

ՀԱՐՏԱՔՐՈՒԹԵԱՅ ՆՈՐ ՄԱՐՁԵՐՈՒ ՓՆՏՈՒԹ

Օմանի նախարարութիւնները կը գործեն Շաւթ ալ Քուրմի արուարձանին մէջ: Անոնց կեդրոնները պալատներու կը նմանին եւ շատ աւելի մեծ երկիր մը ղեկավարելու չափ հզօր տպաւորութիւն կը գծեն: Սակայն այս երեւոյթը քարիւղի վրայ հիմնուած տնտեսութեան մը պարզեւած պերճանքն է: Իսկ քարիւղի տնտեսութիւնը ինքնին բաւարար գործ հալթայթող մարզ մըն է: Օմանի մէջ ամէն ոք կրնայ աշխատիլ կառավարութեան համար՝ սեփական մարզի ու սպասարկութիւնները, ինչպէս նաեւ «սեւ» աշխատանքները ձեռքով ոչ օմանցի գործաւորներու, որոնք թիւը կը հասնի 400 հազարի: Կառավարական պաշտօններ ձեռք ձեռքէ մարմաշը հասկնալի է այնպիսի երկրի մը մէջ, ուր պետական ամսավճարները շատ աւելի բարձր են, քան՝ սեփական մարզին պարագային եւ աշխատանքի ժամերը՝ աւելի կարճ:

Օմանի «վերածնունդը» հրահրել է 28 տարի ետք, քարիւղը արդէն սպառող հում նիւթ մը ըլլալով, երկրին կարգ մը ղեկավարները կը մտածեն բնական կապի արտադրութեան մասին՝ օգտագործելով տեղւոյն համեստ պահեստները: Օմանը նաեւ բաժնեկից մըն է քարիւղատար խոզովակի մը, որ Թուսիսային եւ Ղազախստանէն հում քարիւղ պիտի հոսեցնէ զէպի Սեւ ծով:

Համաշխարհային Դրամատունը 1994ին Օմանի պետութիւնը ամբաստանած էր իր հանքային հարստութիւնը «հսկայական ժառանգութեան» մը նման ծախսած ըլլալու լանցանքով: Այժմ Սուլթան Քապուսի վարչամեթոդները կը ձգտի հիմնել ճիւղաւորուած տնտեսութիւն մը: Անկախ սկսած է ներգրաւել օտար փոքր եւ միջին ընկերութիւններ՝ անոնց ընձեռնելով աճառ վարձքի, առանց տուրքի եւ յարմար գիներով փոխ հատուցումի պայմաններ: Մասքաթի Թուսայի կոչուած ճարտարապետութիւնը չըրանին մէջ կը գործեն 70 ընկերութիւններ: Այսուհանդերձ տնտեսութեան ճիւղաւորումի այս ծրագիրը երկրին արտադրողականութեան միայն 43-5 առ հարիւր կը կազմէ:

Եկամուտի հաւանական այլ աղբիւր մը կը նկատուի գրօսաշրջիկութիւնը: Ի վերջոյ, Օմանը ունի 1800 քմ. երկարութեամբ ծովեզերք մը, հրաշագեղ ծովափներ, տեւական արեւ եւ մաքուր կենսոլորտ: Հազարաւոր քիլոմետր հեռու ըլլալով եւրոպական եւ ամերիկեան շուկաներէն՝ Օմանը միտումնաւոր կերպով կը գտնէ իր



Ուղտերու արշաւը օմանցիներուն գրօսանքի եւ բախտախաղի նախասիրած ձեւն է:

գրօսաշրջիկութեան մարզին ուղեւորութիւն՝ չափազանց խիստ քաղաքականութիւն մը վարելով՝ անկեղ կ'ընդունին միայն հարուստ գրօսաշրջիկներ, որոնք աշխարհահռչակ ճամբորդական բնակչութիւններու միջոցով մեծածախս արձակուրդներ կը ծրագրեն:

Պարսից ծոցի այլ երկիրներու բաղադատած Օմանը թոյլատու երկիր մըն է, որ կ'արտօնէ ոգելից ըմպելիի գործածութիւնը եւ կրօնական օրէնքներու կիրարկումին հսկող ոստիկանութիւն չունի: Սակայն օմանցիներուն մեծամասնութիւնը կ'առարկէ շրջապատյուններու կամ իրենց ունեւիքն ու «սլիփիկ սլիփ»ը չալկած գրօսաշրջիկներու խանգարիչ ազդեցութեան դէմ: «Մալուր գրօսաշրջիկներ կ'ուզեն» ունենալ Տուպայ ամէն օր Թուսիսային եկող օդանւ մը կ'ընկուի: Կիներ իրենց փոխանակելով կիսամերկ կր փոխ փողոցներուն մէջ: Նման երեսոյր չեն ուզեր Օմանի մէջ, կ'ըսէ կառավարական պատասխանատու մը:

Ոչինչ կրնայ նսեմացնել այն տպաւորիչ իրագործումները, զորս կատարած է Օմանի ներկայ սուլթանը՝ երկիրը առաջնորդելով զէպի արդի դարը: Այսուհանդերձ Օմանի քարիւղով հարստացած եւ բարգաւաճած ժամանակաշրջանը հասած է իր աւարտին, մինչ օմանցիք տակաւին պատրաստ չեն ընդունելու այն գաղափարը, որ թեւեւ իրաւունք են նուագ հաստատ ժամանակաշրջան մը: Աշխարհը պիտի սպասէ տեսնելու, թէ արդեօք սուլթան Քապուս պիտի յաջողի երկիրը վարպետելու առաջնորդել ապագայի դժուար կացութեան ընդ մէջէն:

... ՀԻՆ ԵՒ ԱՐԴԻ ԿԵՆՑԱՂԻ ՀԱՇՏԵՑՈՒՄԸ



Անականութեան խորհրդանշիչ խանճարը միջեւ այսօր սովորական օմանցիներուն եւ բարձրաստիճան ղեկավարներուն հանդերձանք



ՆՈՊԵԼԵԱՆ ԴԱՓՆԵԿԻՐ ՇԵՅՄԸՍ ՀԻՆԻԻ ԵԼՈՅԹԸ...

րանաստեղծությունները, բոլորն այժմ Տիանա Տէր Յովհաննէսեանի թարգմանությունները:

Այս բեմ հրաշխանեցաւ ամերիկացի երիտասարդ րանաստեղծ եւ հանրածանոթ «Փուլիքը» գրական մրցանակին արժանացած ձկնոր թէյն, որ ասմունքեց իր անձնական ստեղծագործությունները:

Երեկոյի վերջաւորութեան իր ասմունքներով ելոյթ ունեցաւ 1995ի Նոպէլեան գրական մրցանակակիր, «Իրանական Գրականութեան Տանթէյն» րանաստեղծ Շէյ-մըս Հինի, որուն ստեղծագործությունները կը յատկանշուին դասական պատմությունեց եւ իր կողմէ ստեղծուած դիւցազներգություններու միաձուլումով, որոնց ընդմէջէն ծնունդ կ'առնեն Հինի րանաստեղծություններու առասպելատիպ կերպարները:

Հինի գործերէն են՝ «Հոյգի Սահման», «Մուտք Դէպի Խաւար», «Հիւսիս», «Բնագաշտի Մը Մահը» եւ այլն: Հինի կը դասաւանդէ Հարվարտ համալսարանին մէջ եւ անդամ է Իրլանտայի Արուեստի Ակադեմիային:

Հինի ելոյթով իր ամարտին հասաւ այս հայանպատ ձեռնարկը, որմէ ետք Տիանա Տէր Յովհաննէսեանի եւ Քրիսթափոր Լալորնի շուրջ հաւաքուած ուսանողները երկար ատեն մտիկ կ'ընէին ժողովուրդի մը պատմությունը:



ԻՍԿ ՄԱՐԴԸ ԿԱՐՈՂ ԻՐ ՍՏԵՂԾԵԼ ԱՅԴ

ին, որի արշաւախումբը պեղել էր հին չումերական Ուրաքաքը, տիղմի հաստ շերտի տակ, որը ամենայն հաւանականութեամբ առաջացել էր աւերիչ ջրհեղեղի հետեւանքով, յայտնաբերեց գանձեր՝ ոսկի եւ արծաթէ սկահակներ, մարգարտագարդ հմայիլներ, արծնապակի եւ խճանկար: Գտնուած գանձերի մէջ էր նաեւ հին չումերական աստուածուհի Նին-Խուրսագի տաճարից մի մարգարիտ: Մարգարտահիկի վրայ յայտնաբերուած մանրիկ գրությունն ասում էր այն մասին, որ դա արուել էր դեռեւս «անդրհեղեղեան» դարաշրջանում:

Ուր քաղաքի գերեզմանոցներն ու դամբարաններն այնպիսի խոր հնութեան են, որ իսպառ քնջուել են այդ քաղաքը ընկեցնող հետագայ սերունդներին յիշողութիւնից: Դա հաստատուում է նրանով, որ գերեզմանափոսերը ծածկուած էին տարբեր դարաշրջանների պատկանող աւերակների մի փանի շերտով:

Շումերների գիտատեսիլական նուաճումները աւելին են ապացնում, քան նրանց բարձր մշակոյթը: Շումերներն այդ էն աստղադիտական թուրով գործաւնություններ կ'ին կատարում: Նրանք յորինել են սեպագրությունը, ստեղծել են հիանալի ուղղիչ սխաւում, կառուցել են կոթողային շինություններ: Ապացուցիչ են նրանց յաջողությունները բժշկությունեան, իրաւունքի եւ աստղագիտութեան բնագաւառներում:

Շումերները պաշտում էին աստուածներին, որոնք «ինչ-որ ժամանակ աստղերից երկիր կ'ին իջել», որպէս-գի մարդկանց հաղորդ են իրենց արուեստն ու գիտելիքները: Ուստի աստուած առջեւ նրանք աստղանիշ էին ցնում եւ կանդնեցնում էին վեր խոյացող աստիճանաձեւ աշտարակներ: Հէնց այդ պիսին է եղել չումերներին հնագոյն մայրաքաղաք Ուրուկի Սպիտակ տաճարը, որը կառուցուած էր բարձր քարէ դարատափի վրայ:

Դատելով պատմական յուշարձաններից, չումերների պետությունը գոյություն է ունեցել մէկուկէս հազարամեակ: Եւ նոյնիսկ այն րանից յետոյ, երբ նա յաղթուելով միւս ժողովուրդներից, դադարել է գոյություն ունենալուց, չումերների մշակոյթը դեռ երկար, ինչպէս մի պայծառ ասուպ, յուսաւորել է մարդկությունեան ուղին: Նրա ազդեցությունը կրել են հետագայ բոլոր դարաշրջանները:

Դժուար է հասկանալ, թէ ընդ հանրապէս ինչպէս կարող էր երեւան գալ այդ պիսի գերագանցություն: Ակամայ այն տպաւորությունն է ստացուում, որ որոշակի նախապատմական ժամանակաշրջանում չումերներին սկզբում հաւասարադափ գարգացման մէջ տեղի է ունեցել ինչ-որ ուստիւն: Բայց որտեղից եւ ումից է այն լինել:

Մարդկութեան հնագոյն գրական յուշարձանում՝ չումերներին կ'իյլամէ շրջագնապէս, ասում է, որ Ուրուկեա կ'իյլամէ թագաւորը մի անգամ արշաւում է «Մարիների անտառների միջով»: Բայց չէ որ դա հէնց այն երկիրն է, որին մենք այժմ Լիւանան ենք կոչում: Այսուամենայնիւ, դա պայցուցում է, որ Բ-Ա-3րդ հազարամեակում չումերները ոտք են դրել Սուրիա: Նրանք այնտեղ չէն հանդիպել արդեաւ անդրերկրեայ հետագոստղների եւ տիեզերագնացների, որոնք ինչ-ինչ պատճառներով, մեզ անյայտ քիմիական միջոցներով ստեղծել են այդ վիթխարի քարէ վերանդաները: Գուցէ դրանք ծառայել են որպէս հրթիռների ելակէ տային հրապարակներ: Որեւէ չփում տեղի չի ունեցել արդեաւ մարդկանց եւ այլ մոլորակից եկածների միջեւ, եթէ ի հարկէ որեւէ չփում հնարաւոր է այդ քան տարբեր աշխարհների բնակիչների միջեւ: Այդ ժամանակ մարդիկ չէն ընկալել արդեաւ այն ժամանակուայ իրենց մտաւոր գարգացողութեան համեմատ, «աստուածներին» առաքած նշանները, այն «աստուածներին», որոնք «երկրից իջել էին նրանց ուսուցիչները դառնալու համար»:

Ահա թերեւս, որն է չումերների ապացուցիչ բարձր մշակոյթի եւ Պալայէի վիթխարի քարերի առեղծուածի րանային: Եւ միանգամայն թույլատրելի է այդ պիսի կապ տեսնել: Մի իմաստուն ասել է. «Զկայ այնպիսի մի րան, որ լինելի չլինէր» Իսկ մի թէ գիտությունեան յաջողությունները դարձեալ ու դարձեալ չեն հաստատում այդ ասացուածքի ճշմարտացիությունը, որի իմաստն է՝ ամէն ինչ ըմբռնելի է, ամէն ինչ բացատրելի:

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՌԵՃԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազդակ»ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէ կը խնդրուի ծանուցումին բնագիծը ընթեռնել գործով (հաստատուիւանց պարագային՝ նախընտրաբար յաշտօնական թուղթի վրայ, եւ հաստատուած) ներկայացնել «Ազդակ»ի ծանուցումներու գրասենեակը:

ԱԶԳԱՅԻՆ ԱՐՍՈՐ ԳԱՍԱՐՃԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՆԿԱՐՉԱԿԱՆ ԽՄԲԱՅԻՆ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ

Հովանաւորութեամբ՝
ՏՈՔԹ. ՍԵՊՈՒՀ ՅՈՎ ՆԱՆԵԱՆԻ
(Պետական երեսփոխան)

Մասնակցութեամբ՝
ՆԱՆԻ ԹՈՐՈՍԵԱՆԻ, ՌԻԹԱ ՄԱՍՈՅԵԱՆԻ,
ԺԱԼԵԹ ԵԱՓՈՒՃԵԱՆ - ՅԱԿՈԲԵԱՆԻ, ՎԱԳՕ
ԽԱՐԱՍԵԱՆԻ եւ ԳԵՈՐԳ ՄԵՐՃԱՆԵԱՆԻ

Բացում՝ Հինգշաբթի, 12 Դեկտեմբեր 1996, երեկոյեան ժամը 7ին, դպրոցին «Բակուր Աղասարգիւեան» սրահին մէջ:
Ցուցահանդէսը պիտի շարունակուի ամէն օր, ժամը 4ին 9, մինչեւ Կիրակի, 15 Դեկտեմբեր:



ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՓԱՍՆՃԵԱՆ -
ԱՐՍԼԱՆԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ
ՇՐՋԱՆԱԽԱՐՏԻՑ ՄՈՒԹԻՒՆ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ 61ՐԴ ՍԵՐՈՒՆԳԻ

Համազգայինի Փալանգեան - Արսլանեան Ճեմարանի Շրջաւաւարտից միութեան վարչութիւնը կազմակերպած է 61րդ սերունդին ընդունելութեան հանդիսութիւնը, որ տեղի պիտ ունենայ Կիրակի, 15 Դեկտեմբեր 1996, առաւօտեան ժամը 10ին, Ծաղկածորի Ճեմարանին մէջ:

ՀՐԱԻՐ

«ԱԶԴԱԿ»Ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ

«Ազգակ»ի հետ հեռաձայնային կապ պահելու համար, կը խնդրուի հեռաձայնել հետեւեալ թիւերուն. — 280115, 280780 եւ 583026:



AIR & SEA FREIGHT
PACKING — TRAVEL — INSURANCE

UNITED SERVICES
INTERNATIONAL S.A.R.L.

NACCACHE STREET — CHARTOUNI BLDG
TEL. 350550/1/2/3 — 341150/51 — 342800
P.O. BOX 11 4335 — BEIRUT — LEBANON
CABLE: LOSHSERV — TELEX 20949 LE



**ԲԱՅԱՌԻԿ
ԱՌԻԹ**

«ՆՈԱԶ ԱՐԸ» արուեստի ցուցասրահի տնօրէնութիւնը կը ծանուցէ, թէ Յար Տարուան եւ Ս. Օնուհի առիթով արուեստաւերցերու տրամադրութեան տակ կը դնէ վաճառման աւելի լիւրացանցի, միջազգային եւ մասնաւորաբար հայրենի կերպարուեստագէտներու աւելի քան վեց հարիւր ստեղծագործութիւններ. — քանդակ, իգոն, իւղաներկ, ջրաներկ, կտաւ, միջոց, մետալ, փայտէլ եւ վիմաւիյ գործեր:


Գիները՝ 200.000 լիքսանցանց ոսկիէն սկսեալ, սերտում են եւ մատչելի:

«ՆՈԱԶ ԱՐԸ» արուեստի ցուցասրահը ունի նաեւ այլ ծառայութիւններ, ինչպէս՝ արուեստի գործերու ստուգում եւ գնահատում, արուեստի գործերու գունատիպ եւ քարթրոգրալ հրատարակութիւն, արուեստի գործերու վերականգնում եւ նորոգութիւն, շրջանակներու արակեալ իրագործում, եւ այլն:

«ՆՈԱԶ ԱՐԸ» արուեստի ցուցասրահը գեղարուեստական իր գործառնութեանց մէջ կը ցուցաբերէ մասնագիտական եւ բժախնդրի մօտեցում:

Մշակութային եւ քաղաքական միութիւններու պարագային ցուցասրահը տրամադրելի է առանց շահույթի:

ՏՆՈՒԵԼՈՒԹԻՒՆ
ՄՈՎՍԵ ՇԵՐԳԵԼԵԱՆ



Amelias
Boutani Motors
Hysaid
Centre Al-Arz
Kola Kid
Dora
Byblos Bank
AG LIBAN Gas Station
B.B. STREET
Sonia Z
PARK 2
NOAH'S ARK
Salon G. Balian
Flower Shop
Holy Cross Church

* Հասցէ. — Զալա, Սաքրըր Grand Park 2, B. B. փողոց Դէրուր, հեռ.՝ 03 727211 եւ 01 445873
* Ծանօթ. — Կառատունը ապահովուած:

**ՎԱՐՁՈՒ
ՄԹԵՐԱՆՈՑ**

● Զալա, Ամարաթ Ծալ-հուպ, գոյգ օթոսթրատներու շատ մօտ, զանազան տարածութեամբ մեքանանցներ, պահանջուած ժամանակամիջոցներով: Հեռ. 891328 (գրասենեակ) եւ 04-961848:

**ԾԱԽՈՒ
ՅԱՐԿԱԲԱԺԻՆ**

● Անթիլիաս, Հարէր Ղաւարճ, 175 քառ. մէթր: Դիւնէ՛ հեռ. 03-214135:

ԿՈՒԶՈՒԻ

● Սկսնակ մեքանիքը՝ Էճ-ճիճի մը: Հեռ. 887264 եւ 891136, առաւօտեան ժամը 8էն 4:

**ՎԱՐՁՈՒ
ՅԱՐԿԱԲԱԺԻՆ
ԿԱՀԱՒՈՐՈՒԱԾ**

● Նաքքաշի շրջանին մէջ, 2 մեքանակ, հիւրասենեակ եւ ճաշասենեակ: Դիւնէ՛ ASACO ընկ.: Հեռ. 260777:

**ԾԱԽՈՒ
ՅԱՐԿԱԲԱԺԻՆ**

● 2 մեքանակ, մէկ հիւրանոց եւ յարակից մասեր: Պորճ Համուտ, «Թափիրա-մա»ի դիմաց: Հեռ. 269152:

**ԾԱԽՈՒ
ՅԱՐԿԱԲԱԺԻՆ**


● Էլիսարի շրջան, 105 քառ. մէթր: Հեռ. 03-308506:

**ԾԱԽՈՒ
ՄԹԵՐԱՆՈՑ**

● Էլեքտրիկ մէջ: Հեռաձայնել 447471 թիւին, երեկուեան:

ՇՆՈՐ ՀԱԿԱՆԻԸ

Տիկին Թերեզ Պարտագճեան եւ տէր եւ տիկին Արա եւ Ազնի Պաղտասարեան շնորհակալութիւն կը յայտնեն թոյրանց, որոնք անձամբ, ծաղկեպսակով եւ նուիրատուութեամբ մասնակից եղան իրենց ամուսնոյն եւ հօրեղբոր՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱՐՏԱԳՃԵԱՆԻ մահուան սուգին:



SATELLITES

Բաղդատեցէ մեր գիները

1 Մթըր Անշարժ	195
1 Մթըր Մարժական	425
1,5 Մթըր Մարժական	560
1,9 Մթըր Մարժական	945
2 Մթըր Մարժական	1225
3 Մթըր Մարժական	1355

COLLECTIVE SATELLITE SYSTEMS

01-442925
01-447418
Jeitawi



**ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ՄՈՒՏԵՐ ՆԻԻԹԱԿԱՆ ՄՍԱՀՈԳՈՒԹԻՒՆԵՐԸ ԶԵՐԱԶԱՏԵԼՈՒ ՀԱՍԱՐԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԸ՝**

ԱՏՀԻԼԻ մօք

- ՆՈՒԱԶԱԳՈՅՆ սակերով
- ԱՌԱԽԵԼԱԳՈՅՆ խնամք
- Վճարման դիւրութիւններ

Հասցէ. — Ազգային Խորհուրդի շէնք, ԱՏՀԻ կից, Հեռ. 263324

☆ **ԻՇԿՐԱՆԸ** **ԱՍՏՂԵՐԸ** ☆

☆ **ԽՈՑ** (21 Մարտին 20 Ապրիլ)
Մի՛ վարանի՛ Խտեւելու ձեր նախագգացումներուն եւ ներշնչումներուն, որովհետեւ օրը մեծ քարիկներ վերապահած է ձեզի:

☆ **ՑՈՒԼ** (21 Ապրիլին 21 Մայիս)
Ուշադիր եղէ՛ք՝ ցուրի կամ անհանգստութիւն չունեալ: Նախագգուշութիւններ ձեռն առէ՛ք, որպէսզի չքարդանայ ձեր անհանգստութիւնը:

☆ **ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** (22 Մայիսին 21 Յունիս)
Պիտի փորձուի՛ վասնզկեր յանձն առնելու ու անցնիլ ձեր կարելիութիւններէն անդին: Զգուշ եղէ՛ք, չափազանց մի՛ յոգնել:

☆ **ԽԵՑԳԵՏԻՆ** (22 Յունիսին 23 Յուլիս)
Եռանդուն է՛ք՝ փափուկ կացութեան մը դուրս պիտի ելլէ՛ք առանց վնասուելու: Հանելի անակիկակներու կրնա՛ք հանդիպիլ:

☆ **ԱՌԻԻԾ** (24 Յուլիսին 23 Օգոստոս)
Սրաի գգացական հարց մը պիտի ոգեւորէ ձեզ, մանաւանդ երէ մտորի է՛ք: Ամուսնացեալք եւս պիտի անցընեն ջերմ ու հանելի օր մը:

☆ **ԿՈՅՍ** (24 Օգոստոսին 23 Սեպտեմբեր)
Փիչ մը յանդուգն եղէ՛ք՝ դրամական շահ մը կրնա՛ք բոյլ ապ ձեզի կորցնելու ձեր քաւը: Զեր աչքերը բացէ՛ք, որպէսզի լաւ օգտուիք:

☆ **ԿԵՒՈՒՔ** (24 Սեպտեմբերին 23 Հոկտեմբեր)
Աւելնել նպաստաւոր օրն է մեծ ու գգացական հանդիպում մը կատարելու: Զեր աչքերը բացէ՛ք, որովհետեւ նման առիթներ է՛ք անգամ կ'ընծայուի:

☆ **ԿԱՐԻՃ** (24 Հոկտեմբերին 23 Նոյեմբեր)
Պիտի ունեւա՛ մերոյ ջերմ գգացումներ: որոնք՝ ձեզ պիտի մղեն կազմակերպելու գգացական անսակի հանդիպում մը՝ երկողիան: Մի՛ չափազանցէ՛ք կերպիւնը:

☆ **ԱՂԵՂՆԱԻՐ** (24 Նոյեմբերին 21 Դեկտեմբեր)
Մահելի է օրը՝ յառաջ նետելու համար նախաձեռնութիւն մը կամ ներկայացնելու ծրագիր մը ձեր մեծաւորին: եղէ՛ք համարձակ եւ գործօն:

☆ **ԱՅԾԵՂՋԻՐ** (22 Դեկտեմբերին 20 Յունուար)
Գու՛ ինքնավստահ է՛ք ձեր ըրածին եւ խօսածին, ոչ ոք պիտի կարենայ հակառակ կամ դիմադարձիլ ձեզի: եղէ՛ք հանդուրժող:

☆ **ԾՈՎԱՆՈՅ** (21 Յունուարին 19 Փետրուար)
Զեր բնակարանը կը մտաւոզէ ձեզ ու կարելիութիւն պիտի ունեւա՛ յարգարելու ձեր սան ներկնամար: Կրնա՛ք նոյնիսկ նոր սուն մը փոխադրուիլ:

☆ **ՋՈՒԿ** (20 Փետրուարին 20 Մարտ)
Երէ նախաձեռնութիւն մը կատարէ՛ք, բնաւ մի՛ վարանի՛ք, որովհետեւ պիտի չզոզա՛ք: Համարձակութիւնը ուժ պիտի տայ ձեզի:

ԽԱՉԲԱՌԻ ԹԻԻ 3553 Պատրաստեց՝ Տ. Մ. ԱՐԱԶԱՐԵԱՆ

	1	2	3	4	5	6	7	8	9	10
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ	ՈՒՂԱՀԱՅԵԱՑ
1. Մուցանել, կերակրել - Հասկցիլ:	1. Լիւրանաւահայ երկր-շարաթաթերթ - Ցուցական ածական:
2. Քաջայերուէր - Լծոր-դուլիւն:	2. Հայ նահապետ - Պուրճ Համուտի թագամասերէն (հակ.):
3. Պէյրուլի «Արմենիա» փողոցի նախկին անունը - Քաղցր (հակ.):	3. Եղիշէ արք. Դուրեանի մկրտութեան անունը - Կէս՝ պատկերացարդ:
4. Կարծրանայ, պնդա-նայ - Կրկնուած բաղաձայններ:	4. Որսաշուռ եւ վատու-գի (երկու բառ):
5. Վկայ:	5. Էական բայ - Հայկա-կան աղօթագիրք:
6. Գոյանար - Մեր նախահայրերուն սիրելի ծառատեսակ:	6. Հրանիւթը - Կոկորդի գեղձ (հակ.):
7. Եզրպտական դից - Այրուրենէն (հակ.) - Պսակ:	7. Պողատեսակ (հակ.) - Լեզուով մը այր:
8. Հերձաքարէ տախտակ - Կիսուած՝ դրոշմ:	8. Արեւու ջերմութիւն - Կրկնուած բաղաձայններ:
9. Երկայրի տապար - Անշմարելի անձրեւ:	9. Միաձեւ, միակերպ:
10. Ուշ, տարաժամ - Ան-գամ (հակ.):	10. Նաեւ - Դադար (հակ.):

ԹԻԻ 3552

ԽԱԶԲԱՌԻՆ

ԼՈՒԾՈՒՄԸ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Ա	Բ	Ժ	Ա	Ա	Հ	Ա	Ս	Ս	Ս	Ս
2	Ն		Է	Մ	Ե	Ր	Ե			Ա	
3	Դ	Բ		Է	Թ	Ա	Ս			Ե	Ր
4	Ր	Ե	Ն		Ի	Ս	Կ		Ա	Թ	Ա
5	Է	Մ	Ի	Ր		Տ		Ե	Լ	Է	Ը
6	Ա		Կ	Ո <td>Ր</td> <td>Ա</td> <td>Կ</td> <td>Ո</td> <td>Ր</td> <td></td> <td>Ն</td>	Ր	Ա	Կ	Ո	Ր		Ն
7	Ս	Գ	Ա	Լ		Ր		Ս	Ա	Ո	Ա
8	Ե	Զ	Ր		Ն	Ա	Ն		Կ	Ա	Ր
9	Ր	Է		Կ	Ա	Ն	Ո	Ն		Հ	Հ
10	Է		Ծ	Ի	Ն		Կ	Ե	Ր		Ի
11	Ծ	Ո	Ի	Ծ	Ա	Տ	Ա	Ն	Տ	Ա	Կ

ԻՍՐԱՅԷԼԻ ԵՒ ԴՐԱՅԻՆԵՐՈՒՆ ՄԻՋԵԻ՝ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՓՈՐՁԷ ԿԱՄՈՒՐՋՆԵՐ ՍՏԵՂԾԷԼ

ԳԱՀԻՐԷ, 8 (ՌԵՕԹԸԼՐ).- Եգիպտոսի նախագահ Հիսսնի Մուսարաֆ Կիրակի օր տեսակցութիւն ունեցաւ Եւրոպական Միութեան յատուկ պատուիրակ Միկէլ Ան-խէյ Մորաթինոսի հետ՝ քննարկելու համար Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացը։

Մորաթինոս, որ միեւնոյն ատեն Սպանիոյ դեսպանն է Իսրայէլի մօտ, թղթակիցներու յայտնեց, որ Եւրոպական Միութիւնը արդէն իսկ առաջարկած է վստահութիւն ամրապնդող գործընթաց մը՝ իրարու մօտեցնելու համար խաղաղութեան ընկերակիցները՝ արաբներն ու իսրայէլացիները։ Ան աւելցուց, սակայն, որ աւելի յրստակ եւ շօշափելի որոշումներ պիտի ներկայացուին բոլոր կողմերուն հետ տեսակցութիւն ունենալէ ետք։ Մորաթինոս ըսաւ, որ պաղեստինցիներուն եւ իսրայէլացիներուն միջեւ բացեր կան, որոնք պէտք է փակուին։

Եգիպտոս այցելելէ առաջ, Մորաթինոս Սուրիա այցելած էր եւ տեսակցութիւն ունեցած՝ արտաքին գործոց նախարար Ֆարուք Շարէհի հետ, որ իրեն յայտնած է, թէ Դամասկոս կ'ուզէ արդար եւ ամբողջական լուծում մը տեսնել Միջին Արեւելքի մէջ։ Շարհէ չեչտեց, սակայն, որ այդ լուծումը պէտք է հիմնուած ըլլայ ՄԱԿի որդեգրած որոշումներուն եւ սկզբունքներուն վրայ։ Շարհէ յայտնած է նաեւ, որ Սուրիա պատրաստ է բանակցութիւններ վերսկսելու այն կէտէն, որ կանգ առած էր իսրայէլի նախկին կառավարութիւնը, որ համաձայնած էր վերադարձնել 1967ի գրաւուած հողերը։

ՓՈՂՈՑԸ ԲԱՑՈՒԵՑԱԻ, ԲԱՅՑ ԵՐԹԵՒԵԿԸ ԱՐԳԻԼՈՒԱԾ...

ՀԵՊՐՈՆ, 8 (ՌԵՕԹԸԼՐ).- Իսրայէլ Կիրակի օր բացաւ Հեպրոնի մէկ փողոցին մէկ բաժինը, որ պաղեստինցիներուն առջեւ փակուած էր երկու տարի առաջ, յայտնեցին ՊԱԿի պաշտօնատարներ։ Բանակցութիւնները վերսկսելու գլխաւոր պահանջներէն մէկն էր փողոցին բացումը։


Ականատեսներ յայտնեցին, որ իսրայէլեան պոլիտոգրները վերցուցին հսկայ քարերը, որոնք փակած էին «Շուհատա» փողոցի մուտքը։ Փողոցը թէեւ բացուեցաւ, սակայն պաղեստինցիներուն երթեւեկը տակաւին արգիւտած կը մնայ, ըսին ականատեսները։

●**ԻՍՐԱՅԷԼ** կը ծրագրէ հրեաներու համար բնակարաններ կառուցել Արեւելեան Երուսաղէմի մէջ, յայտնեցին իսրայէլացի պաշտօնատարներ։ Բնակեցման այս նոր ծրագիրը, սակայն, տակաւին չէ ապահոված կառավարութեան հաւանութիւնը։ Ծրագիրը պիտի ֆինանսաւորէ սեփական մարզը։

ՉԱՅԻՐԻ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ ԸՆԴԴԻՄԱԴԻՐՆԵՐՈ՞ՒՆ ԿԸ ՄԻԱՆԱՆ

ՊԵՆԻ, 8 (ՌԵՕԹԸԼՐ).- Չայիրի ընդլիմադիր ուժերը կը հաւաստեն, որ կառավարական ուժերը իրենց կը միանան, մայրաքաղաք Քինշասայի վրայ յարձակումին։ Հիւսիս-արեւելեան Պունիա քաղաքէն հասած տեղեկութիւնները, սակայն կ'ըսեն, որ բանակը լաւ վիճակի մէջ է եւ կրնայ քաղաքը պաշտպանել որեւէ յարձակումի դէմ։

Ընդդիմադիրներու գինեւորական հրամանատար Անտրէ Քիսսասէ Նկանտու Կիրակի օր յայտարարեց, որ աւելի քան 300 գինեւորներ, որոնց կարգին են զնդապետ մը եւ երեք սպաներ, միացած են ընդդիմադիրներուն եւ կը պահանջեն, որ նախագահ Մուպութեմ հրաժարի։ Նկանտու չեչտեց նաեւ, որ ընդլիմադիր ուժերը յառաջիկայացրին մէջք եւ եւ շուտով պիտի կարենան գրաւել մայրաքաղաքը։



61-inch
Projection TV

**BEST PRICE
BEST QUALITY-BEST FEATURES**

WIDE 56" 48" 55" 61"

UNILEC EXCLUSIVE DISTRIBUTOR OF **TOSHIBA**

In Touch with Tomorrow

Office and showroom : Jal El Dib - Mid Town Center. Tel. 01 - 406393/4 - 444693
Telex - 44737 LE - Fax - 01 - 601915 Workshop : Mar Mikhael Street Abdjian Bldg. Tel. 01 - 447040

ՄԱԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆ ԵՐՈՒ ԾՈՒՐՋ ՈՒԱՇԻՆԿԹԸՆ - ՓԱՐԻՋ ՇԱԿԱԴՐՈՒԹԻՒՆԸ ՆՈՐ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆ ԿԸ ՉՏԷ

ԱՊԻՃԱՆ, 8 (ՌԵՕԹԸԼՐ).- ՄԱԿի ընդհանուր քարտուղար Պուլթրուս Ղալիի կողմէ երկրորդ նրստաշրջանի մը համար թեկնածութեան առկախումը պատճառ դարձաւ, որ ափրիկեան պետութիւններ յառաջ մղեն իրենց թեկնածուները՝ ՄԱԿի մէջ բարձրագոյն պաշտօնին տիրանալու համար։

Ղանա, Փղոսկրեայ Ափունք, Նիկէր եւ Մաւրիտանիա պաշտօնապէս ներկայացուցած են իրենց թեկնածուները։ Կր նախատեսուի, որ այլ երկիրներէ եւս թեկնածուներ յայտարարուին մինչեւ Երկուշաբթի օր, երբ Ապահովութեան Խորհուրդը վերստին քննարկէ ընդհանուր քարտուղարի ընտրութեան հարցը։

Ափրիկեան Միութեան կազմակերպութեան ընդհանուր քարտուղար Սելիմ Ահմատ Սելիմ, որ հաւանական թեկնածու մըն է, թուոյ կ'այցելէր Կիրակի օր՝ տեսակցութիւն ունենալու համար Ֆրանսայիս երկիրներու կազմակերպ-

ԻՍՐԱՅԷԼ ԿԸ ԲԱՅԱԿԱՅԻ...

Փաթի եւ նախագահ Հիւսնի Մուսարաֆի գեկուցած է Լիզպոնի մէջ Իսրայէլի վարչապետ Պենիա մին Նեթանիահուի հետ անցեալ շաբաթ իր ունեցած տեսակցութեան մասին։

Արաֆատ եւ Նեթանիահու պատրաստակամութիւն յայտնած են տեսակցելու եւ լուծելու Հեպրոնի առկախուած հարցը։ Տեսակցութեան միմասին, սակայն չօշափելի բան չկայ տակաւին։

ԿԱՐԳ ԼՈՒՐԵՐ

ԱՄՍԴՆ.- Իսրայէլեան երեք ընկերութիւններ պիտի մասնակցին Յորդանանի մէջ տեղի ունեցող զինուորական օգնութեան ծրագրին։

ԹԵՀՐԱՆ.- Արեւմտեան

պութեան վեթերան նախագահ Կնասիէկալէ Էյատեմայի հետ։ Սելիմ ըսաւ, որ յինկթրն վեթօ դրաւ Պութրուս Ղալիի վերընտրութեան դէմ։ Մանտեյա կ'ըսէ, որ Ֆրանսա դէմ պիտի կանգնի Սելիմի թեկնածութեան, որովհետեւ ան լաւ ֆրանսերէն չի խօսիր։ Մանտեյա աւելցուց, սակայն, որ Սելիմ յարմար անձ մըն է՝ փոխարինելու նախագահ Ժաք Շիրաքը։

- ՍԼԷՅՄԱՆԻ ՄԱՐՄԻՆԸ ԳՏՆՈՒԱԾ...

3 տարի բանտարկութեան։

Այս հարցով այլ մեղադրեալ մը՝ Թունի թայար, որ ձերբակալուած էր, Շարաթ օր ոստիկաններու եւ արդարութեան ներկայացուցիչներու ցոյց տուաւ այն վայրը, ուր թաղուած էր Ռաֆայի Սլէյման։ Ծանօթ է, որ կեղծ դրոշմաթուղթերու վաճառքի գալթակցութեան գլխաւոր մեղադրեալը նկատուող Ռաֆայի Սլէյման անբնութեացած էր գալթակցութեան քղազերծման օրերուն։ Լեւոնային չըջանի մը մէջ գտնուեցաւ անոր թիթուով (աստիտ) ալքած մարմինը, որ, ըստ մեղադրեալին, հոն թաղուած է սպաննուելէ ետք։ Մեղադրեալը ըսաւ, որ Սլէյման սպաննուած էր Մուսայիի թելադրանքով։

Նկատելի է, որ գալթակցութեան պատասխանատուներուն հետապնդումը այսպէսով կը հասնի փակ օղակի մը, բացի այն պարագային, որ ոստիկաններուն հարցաքննութենէն կամ այլ քննութիւններէ նոր թերեւ գտնուին։

ՍԼԷՅՄԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԸ ԶԵՆԻՒՈՒՆԵՐ

Ռաֆայի Սլէյմանի ընտանիքը հաստատեց, որ գրտնուած անձանչելի ղիակը Սլէյմանն է, սակայն ան մերժեց ընդունել անոր ուղղուած մեղադրանքները, յայտարարելով, որ ան գոհ է քաղութեան նոխազ մը՝ աւազակախումբի մը, որ կը մնայ մուսլիմ մէջ։ Ռաֆայի Սլէյմանի հօրեղբորդին, որ դարձած է ընտանիքին բանբերն ու Սլէյմանի պաշտպանը, կ'ըսէ, որ գտնուած է «անգլուխ ղիակ մը, մինչ անդին կը մնայ ծածկուած գլուխով աւազակախումբ մը»։ Ան կը պնդէ, որ իր հօրեղբորորդին անմեղ է, սպաննուած է իւր ուժով գործները ծածկելու համար։ Ընտանիքը կը մերժէ ստանձնել անոր ղիակը եւ կը պահանջէ, որ այս ոճիրին ծայրերը բացուին։

Իրանի Քերմանշահ, Փաւէ Եւ Ճաւանուտ քաղաքներէ քաղաքները խաղաղեցան շարաթափերէն, քանի մը օր առաջ ծայր տուած խուլութիւններէն ետք։ Խուլութիւնները հետեւեալ էին բարձրաստիճան կրօնաւորի մը սպանութեան։

ՆԻՒ ՏԵԼԷԻ.- Հնդկաստանի մէջ վիճակագրութիւնները ցոյց կու տան, որ իսրայէլացի 10 հոգիէն չորսը չքաղաք են։

ՊԵՐԼԷՆ.- Մարդկային իրաւունքներու կնոջական շարժում մը, որ շարաթական հաւաքներ կը կազմակերպէ Պոստլ մէջ՝ իշխանութեան կողմէ խոշտանգումի, ձերբակալութիւններու եւ ընդլիմադիրներու «անհետացումներ»ուն դէմ, մրցանակի մը արժանացաւ Պերլին մէջ։

ՄՈՍԿՈՒ.- Չեչենիոյ կեղծմական ընտրական լուծումաւոր յայտնեց, որ ցարդ 19 հոգի թեկնածու ներկայացած են նախագահական ընտրութիւններուն, որոնք տեղի պիտի ունենան Յունուարին։

ՊԵՐԼԷՆ.- Մարդկային իրաւունքներու կնոջական շարժում մը, որ շարաթական հաւաքներ կը կազմակերպէ Պոստլ մէջ՝ իշխանութեան կողմէ խոշտանգումի, ձերբակալութիւններու եւ ընդլիմադիրներու «անհետացումներ»ուն դէմ, մրցանակի մը արժանացաւ Պերլին մէջ։

ՄՈՍԿՈՒ.- Չեչենիոյ կեղծմական ընտրական լուծումաւոր յայտնեց, որ ցարդ 19 հոգի թեկնածու ներկայացած են նախագահական ընտրութիւններուն, որոնք տեղի պիտի ունենան Յունուարին։

Speedway
BLANCO CENTER
Հեռ. 585545-268962

ՕՐՈՒՄՆ ԾԱԾԸ

- ՍՓԼԿԵԹԹԻ
- ՊՈԼՈՆԷԶ
- ԱԳՅԱՆ
- ԿԱՄ —
- ԷՍԸԼԼՈՓ
- ՎԻԵՆՆՈՒԼԶ
- ՏԱՊԿՈՒԱԾ
- ԳԵՏՆԱԽՆԶՈՐ
- ԱԳՅԱՆ

ԹՈՒՆԶԵԼԻ.- Թուրքիոյ հարաւ-արեւելեան Թունչելի նահանգին մէջ Շարաթ օր տեղի ունեցած բախումի մը ընթացքին սպաննուած են թուրք գինեւոր մը եւ պահակ մը։

ՏՈՒՊԱՅ.- ՍԼուտական Արարիոյ մէջ երկ եմէցի մը զմտամոցաւ ալ եմէցի մը դաշունահարելով սպաննած ըլլալուն համար։ (ՌԵՕԹԸԼՐ)

ՄԼԿԻ ՀՍԱՌՈՂՈՒԹԵԱՆ ՏԱԿ ԻՐԱՔ ՎԱՂԸ ՊԻՏԻ ՍԿՍԻ ԶԱՐԻԻՂ ԱՐՏԱԾԵԼՈՒ

ՊԱՂՏԱՏ, 8 (ՌԵՕԹԸԼՐ).- ՄԱԿի մասնագէտներու փոքր խմբակ մը հիւսիսային Իրաք ուղղուեցաւ Կիրակի օր՝ հսկելու համար քարիւղի արտածման գործողութեան։

ՄԱԿի ադրիւր մը յայտնեց, որ Շարաթ օր Պաղտատ հասած 10 մասնագէտներէն չորսը հիւսիս մեկնեցան՝ հաստատուելու համար Ջախոյի մէջ, ուրկէ կ'անցնէ Իրաք - Թուրքիա քարիւղատար գոյգ խողովակը։ Մնացեալ վեցը հարաւ պիտի ուղղուին, հսկելու համար Մինա Պաքրի մէջ, ուրկէ եւս Իրաք պիտի արտածէ սահմանափակ քանակութեամբ քարիւղ։

Իրաքեան պաշտօնական ադրիւրներու համաձայն, քարիւղի արտածումը պիտի սկսի Երեքշաբթի օր՝ եգրականեցի ետք համաձայնագրին մանրամասնութիւնները ՄԱԿի հետ։ Իրաք արտօնութիւն ունի 2 միլիառ տոնային քարիւղ արտածելու վեց ամսուան ընթացքին՝ որպէսզի կարենայ սննդեղէն եւ դեղ գնել։

ՄԱԿի հետ համաձայնութեան յոյսին տակ, մեծ թիւով տար գործատէրեր Պաղտատ կը դիմեն, պայմանագրութիւններ ապահովելու համար։

●**ՕՓԷՔ** գոհ է քարիւղի ներկայ սակագինով եւ նպատակ չունի գայն բարձրացնելու, կ'ըսէ ընդհանուր քարտուղար Ռիլուանու Լուքման։ Ան չեչտեց, որ արտադրութեան ճշգրտած չափերը եթէ յարգուին, սակերը անփոփոխ պիտի մնան։

ԸՆԴԱՐՉԱԿՄԱՆ ԾՐԱԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՐՅՈՎ ՕԹԱՒԻ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ ՊԻՏԻ ԱՆՏԵՍԵՆ ՌՈՒՄԻՈՅ ԸՆԴԴԻՄՈՒԹԻՒՆԸ

ՊԻՐԻՔԱՄԷԼ, 8 (ՌԵՕԹԸԼՐ).- ՕԹԱՒԻ արտաքին գործոց նախարարները Պրիւքսէլի մէջ ժողով մը պիտի գումարեն այս շաբաթ, վաւերացնելու Պոստլոյ համար խաղաղութեան նոր առաքելութիւն մը, ինչպէս նաեւ քրննարկելու կազմակերպութեան ներքին բարեկարգումի ծրագիրները՝ եթէ դէպի արեւելք ընդարձակուելու ծրագիրը գործարկութեան դրուի։

ՕԹԱՒԻ 16 նախարարները երկրորդ նիստ մըն ալ պիտի ունենան Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Եւգենի Փրիմաքովի հետ, որուն երկիրը կը մերժէ ՕԹԱՒԻ դէպի արեւելեան Եւրոպա ընդարձակումը։

Արեւմուտքի ղեկավարները չեչտած են, որ արեւելեան եւ կեղծոնական Եւրոպայի մէջ նախկին համայնավար կարգ մը երկիրներ անդամ պիտի դառնան ՕԹԱՒԻին եւ թէ՛ անդամակցութեան բանակցութիւնները յառաջիկայ տարի պիտի սկսին, ինչ ալ ըլլան Մոսկուայի առաքելութիւնները։

Դիւանագէտներ եւ մեկնաբաններ կ'ըսեն, որ ՕԹԱՒԻ նախարարները մեծ կարեւորութիւն պիտի չտան կազմակերպութեան ընդարձակման ծրագիրներուն հանդէպ՝ Մոսկուայի ընդդիմութեան։

**Optique
La Vista**


ԱՇԽԱՐՀԱՆՉԱԿ ԿԱՃԱՌԱՆԻՇՆԵՐՈՎ

ԱՐԵՒԻ ԱԿՆՈՑՆԵՐ

- VERSACE
- VERSUS
- GENNY
- BYBLOS
- MOSCHINO
- PERSOL
- BOXER
- YAMAMOTO

ԲԺՇԿԱԿԱՆ ԱԿՆՈՑՆԵՐ
(ՅԱՆՃՈՒՄ 1 ԺԱՄԷԸ)

ՀՐԱՅՐ ԱՂԱՍԱՐԳԻՍԵԱՆ
Պուրճ Համուտի քաղաքապետարանի
հրապարակ, հեռ. 03-302752



EDOX
SWISS MADE

On nous aime
Rares...

Agent Exclusif:
ETS. HAIGAZ YARDEMIAN, Tel.: (01) 260889 - 583598